

դէվիլ. հեղինակութիւն Միքայէլի Պատկան
նեանց. երեք գործողութիւնով:

Թհատրոնի դիրէկտօր՝ Մ. Պատկանս

Դպրոցը զբուց լուսաւորում են բազմաթիւ ճրագներով, իսկ գահլիճն ու բեմը զարդարում հազարաւոր մոմերով։ Փայտաշխն բեմի պատերը շինում թղթերից։ Վրան դնում մի սեղան ու մի քանի աթոռներ։ Արանձնապէս նկարագրում են բեմի վարագոյրը։ Դա պարզ և անպանոյն մի պատկեր էր, որ ցոլացնում էր մեծ և փոքր Մասիսները։ Մեծ Մասիսի վրայ կանգնած թեւաւոր հրեշտակը ձեռքին ունէր կանաչ տերեւներից հիւսւած մի պատկէ։ Սարի փէշին կանգնած չորս երիտասարդներն, իրենց ձեռքերը տարածել էին դէպի հրեշտակը։

1859 թ. Դեկտ. 24-ին, երեկոյեան ուղիղ ժամը $7\frac{1}{2}$ -ին հասարակութեան տարբեր խաւերը, մօտ 300 հոգի - «իշխանագունը», ազնւականը, աստիճանաւորը և քաղաքացից, նմանապէս կանայք և օրիորդք ամենայն կարգի ժողովրդից»։ Դաշլիճի մի կողմում, աթոռների վրայ, նստում են կանայք ու աղջիկները, իսկ միւս կողմում՝ տղամարդիկի։

(Շարութակիլի)

Ժամն ուղիղ 8-ին հնչում է երաժըշտութիւնը և բայցւում վարագոյրը։ Դերակատարները խաղում են մեծ յաջողութեամբ։ Աղեքսանդր Պատկանեանը կերտում է թուղթ խաղացողներից մէկի՝ Յովհաննէսի տիպը. մանաւանդ իր ստեղծագործական ամրող թափը հանդէս է բերում ուսանող Տէր-Սարգսեան Պետրոսի կնոջ դերում, որ վերարտազրում է բաւական հմտութեամբ։

«Ճշմարիտը խօսելով, - գրում է ներկայացմանն ականատես եղող Յակոբ Կարինեանը, - ուսանող երիտասարդները իրանց ուղիները լաւ ներկայացրին, մանաւանդ պ. Տէր - Սարգսեանցը, որին վիճակել էր Պետրոսի կնոջ ուղը»։

Այդպէս էր ժամանակի պահանջը։ Կանայք զեռ իրաւունք չունէին բեմ բարձրանալու։ Այդպէս էր պատկերը բեմի վրայ։ Այդպէս էր պատկերը և գահլիճում։ Հասարակութեան իգական սեոր դահլիճում բոլորովին առանձին է նստում արական սեորից։ Դրա համար էլ տարբեր գոյներով տպագրում են թատրոնական մուտքի տումսակները։ Գոյներն էլ բաժանում են երկու սեորը։

Արար Երեմես

ԾԱՆՈԹ. — «Բազմավէպ»ի ընթերցողներուն ճաշակ մը տալու համար յարգելի Պին. Ա. Երեմեանի աշխատասիրած մանրամասն և հետաքրքրական գործէն «Ուսահայ բատրոնի պատուրիչներ» ցարդ շարունակեալ չորս թիւերու մէջ կարգաւ հրատարակեցինը մաս մը։ Գործին ամբողջութիւնը առանձին հատորով լոյս կը տեսնէ. մինչ այդ ընդմիջեալ կերպով պիտի ներկայացնենք դեռ քանի մը հետաքրքրական գլուխներ ալ։

ԿԱՐԵՒՈՐ ՈՒՂՂԵԼԻՔ. — «Բազմավէպ» 1934, Փետր. - Մարտ, թիւ 2-3

Էջ Սիւն ՏՈՂ. ՏՊՈՒՄԸ Է

84 Բ. 1 որ առաջին հայ թատերոցութիւնը
88 Ա. 11 Ոչա Ա. առաջին հայ թատերոցութիւնը
88 Ա. 31 Ակեցեցական


ՊԻՏԻ ԼԻՒԽԻ

որ առաջին հայ թատերոցութիւնը
Ա. առաջին հայ թատերոցութիւնը
Ակեցեցական

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆԵԱՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ճարտարապետութեան անխոնջ ուսումնամիրով, եւ հանրութեան ծանօթ և սիրելի գէմք մը կ'անհետանայ Հայաստանի հորիզոնէն, թ. Թորամանեան ճարտարապետը և իր մասնագիտութեան մէջ պատկառելի գիտնականը։ Երեսուն տարիներ գիտական պեղումներ կատարելով Անի և այլուր, կոթնած բահին եւ բրիչին վրայ, գրիչը ձեռքին ինկաւ խրամատին վրայ, զոր իր յամառ աշխատութեամբ պեղեց եւ ոտն առ ոտն իջաւ գիտութեան խորը, բանալով անցելոյն գաղտնիքը, յայտաբերելով փլատակներու տակ ծածկուած դարերով՝ հայ հանճարի գեղարուեստական ստեղծագործութիւնները, նա ծանօթացուց թէ ինչ եղած էր երբեմն այժմու շինուածքներու կերպարանը բանքը. իր գիտութիւնը խոր է ջրի մը պէս՝ որուն յատակը չի տեսնուիր։ Երկարամեայ փորձառութեամբ ձեռք բերած գիտութիւնը, ճշմարիտ և խոր գիտնականի մը համբաւին արժանացուցեր էր զինքը, օտարազգի աշխարհաճռչակ գիտնականներ մեծ յարգանցով կը յիշէին մեր համեստ վաստակաւորին անունը։ Եւ մենք կը սիրէինց յուսաւ, որ այս իր վատած նոր ճրագի բոցով, մի քանի տարիներ եւս լուսաւորէր հնութեան մթութեան մէջ զեռ պարուրուած ազգային շինուածական մը շակոյթի կոթողները, աւազ, ինչ ժամու մէջ չէինց կարծեր, անձանօթի շունչը մարեցաւ ճրագը, անցաւ գնաց անչչեց, մարեցաւ ճրագը, անցաւ գնաց անձանութեան մէջ, ասուսի պէս լուսաւորէր հետք մը թողլով Հայկական ճարտարապետական պատմութեան մէջ, որ սակայն պիտի չանցնի։ Զէի սպասեր ողբալու շուռ տով այն կեանքը, որ կենդանութիւն տուաւ հանգած աւերակներուն, որոնք երբեմն



արեւի տակ ազգի մը պարծանքն եղած էին, և բարբարոսներ հողի տակ թաղեցին, թ. Թորամանեան իր մեծ տաղանդով վերակերտեց և ի լոյս հանեց, անոնք այսուհետեւ անեղծ պիտի մնան և խօսին ամէն հայ սրտի։

Հայ ճարտարապետ թ. Թորամանեանի հայրենիքը, Շապին-Բարահիսար գիւղացաղը, ընդ մէջ Եւղոկիոյ և Գ. Հայոց սահմաններու մօտերը, պատմական վայր մ'եղած է. հոս, ըստ Խորենացւոյն, Մորփիութիւնը կը պատահի պատերազմով վաշուրշակի հետ։ «առ բարձրաւանդակի միոջ բլուզ բարագազարեն», - որ այժմ ասի՝ կողոնիւաւ։ Նոյն այս բաղաբիս մօտերը Միհրգատ կը յաղթուի Պոմպէոսէն, եւ բաղաբին անունը փոխելով Նիկուպոլիս կը դնէ։ Հ. Ալիշան Քաղաքական աշխարհազրութեան մէջ կը գրէ. «Շապին-Բարահիսար» առ ստորոտով քարալերին կայ, ունելով ի նմա բերդ։ Կոչուած է նաեւ Սատաղ. սահմանակից թ. Հայոց նշանաւոր գաւառներուն, ուր 1883 թուին, ըստ Պոլսի լրագիրներուն, գտնուեցաւ Անահաւայ պղնձէ արձանին զուլիսը, որ ըստ Ագաթանգեղոսի, Թիւն աւանի մէջ, իրը դուստր Արամազդայ պաշտուած էր և հի-

մա կը գտնուի թրիտանական թանգարանին մէջ : Այսպիսի ոչ աննշան գաւառի մէջ ծնած է հայ ճարտարապետը 1864 թուին . աղքատ ծնողաց զաւակ, կը յաճախէ տեղական ուսումնարանը, 14 տարեկան կը զրկուի ծնողըն, բայց ազգականներու պաշտպանութեամբ ոչ միայն յաջողապէս կ'աւարտէ ուսումը այլ եւ անոնց օգնութեամբ կը հասնի կ. Պոլիս: Քանի տարեկան պատանին ճարտարապետական գիտութեան մասնաւոր բերումն ունենալով՝ կը յաջողի մանել կ. Պոլիսի գեղարուեստական վարժարանը եւ հինգ տարուան շրջանը կատարելով կը ստանայ պատկանեալ վկայականը: Բայց այդցանը բաւական չնամարելով կը յաջողի ինք-զինքը Փարփիզ նետել, և հոն բնածին բերումով ինքնազարգացման կը զիմէ եւ միանգամայն յաճախելով գեղարուեստից վարժարանը, լսելով նշանաւոր ուսուցիչներու դասախոսութիւնները, կը զարթնու իր մէջ ուրոյն մասնագիտութեան խթանը, Հայկական հին ճարտարապետութեան արուեստի գաղտնիքը հետազօտելու, և այդ նպատակով կը պատրաստէ ամբողջ հարկաւոր նիւթերը համեմատական գիտութեան, արժեցնել տալու հայկական արուեստը եւրոպական զիտուններուն:

Փարիզի մէջ կը հանդիպի Պրն. Կ. Բառ-
մաճեանի, որ իրեն պէս ցանկացող մ'ե-
ղած է հայրենիքի հնութեանց ուսումնա-
սիբութիւններով զրադելու. փոքր գումարով
ճամբայ կ' ելլեն դէպ ի կովկաս . Պրն .
Բառմաճեան հոն թողլով զժորամաճեան,
ինք կը վերադառնայ :

Անցեալ դարուն վերջերը, 1898 թուէն
սկսած քանի մը տարիներ, այցելութեան
ըսեմ թէ ովհտագնացութեան կ'երթայի
Անի և շրջակայքը, զուարճալին և օգտա-
վարը զուգելով ի միասին, կը լուսանե-
կարէի մեր նախնեաց կիսափուլ հրաշա-
կերտ կոթողները, մեր վանքի երկնարիւր-
ամենակը տօնելու առթիւ, արժանաւոր
նուէր մ'ընել վանքիս թանգարանին, յորմէ
մեծապէս օգտուեցաւ Ստրչիկովսկի եզա-
կան ճարտարապետը, նա՝ որ ախոյեան

կանգնեցաւ Հայ Ճարտարապետութեան
դատին :

Ուրեմն երեսուն տարի առաջ, 1904/ն,
հանդիպեցայ թ. Թողրամանեանին՝ Անիի
մէջ. շուտով ծանօթացանք իրալու։ Ամէն
անգամ գնալուս մեծ հաճոյք կը զգայի՝
զինքը և Անիի պահապան Ղարաբաղցի
Միբայէլ վարդապետը տեսնելու։ Թերեւս
միակն էի՝ որուն հետ մտերմաբար կը
խօսէր եւ իր ցաւերը կը յայտնէր. իր
միայնութեան լքուած վիճակին վրայ չէր
տրտնջեր, այլ նախանձէն զրդուած, կամ
հնչ բանէ, ականջը հասած բամբասանք-
ներէն, խծրծանքներէն կրած դառնութիւն-
ները պատմելով կը թեթեւնար սիրար, և
կը միփթարուէր որ կար մէկը անկեղծօրէն
զինքը հասկցող, և որ կ'ըմբռնէր ու կը
զնահատէր իր մեծ զոհողութիւնները վեհ
նպատակի մը համար. ԱՇէկ երկու քաջա-
ներական խօսքեր կը սթափեցնէին, կը
կազդուրէին զինքը, լաւագոյն յօժարու-
թեամբ՝ տաժանակիր աշխատութեան լու-
ծը քաշելու։ Տեսնելով որ ես ալ հնու-
թեանց սաստիկ սիրահար եմ, անգամ մը
ոսաւ. «Հայր սուրբ, արի՝ այստեղ ի միա-
սին աշխատինք. ես գծագրեմ, արուճա-
նակներ հանեմ, դու զբէ եւ նկարազրէ
պեզումներու տուած արդիւնքը, լաւ ծա-
ռայութիւն մատուցած կ'ըլլանք ազգին և

Հայրենիքին համար»։

Հատ մօտ էր սրտիս՝ բարեկամիս առաջարկը, ափսոս որ ազատ չէի, այլ եկեղեցական պաշտօնով կապուած էի ժողովրդեան հետ։

Երբեմն պատահեցաւ որ թագուէն, Թիֆլիզէն հասած ուխտաւորներ լիք փորդուեներով, կ'ուտէին, կը խմէին, բայց իրենց քսակներուն բերանը կարած ետ կը դառնային ուրախութեամբ . մէկը չեղաւ որ իշէր այս նոր աղքատ Ղազարոսը՝ բազմարդին ճարտարապետ Թորամանեանը : Յաւալի էր հարուստներու այս անտարեերութիւնը, չէնտաքրքրուելով ոչ անոր անձով և ոչ կատարած գործերով։ Բայց Թորամանեան անոյշ ժպիտով մը կը հասլըցնէր որ անոնք անցողական են ստուերի

պէս ապարդիւն կեանքով ; և վստահ էր
որ իր զործին շնորհիւ կեանքը հաստա-
տուն պիտի մնար , ըստ ժողովրդական ա-
ռածին՝ թէ ջուրը կ'երթայ , աւազը կը
մնայ : Ի մանկութենէ վարժած զրկանք-
ներու եւ չարբաշ կեանքի , ստոյիկեան
հաստատամտութեամբ , առանց մնալար-
ծութեան կը տանէր բնութեան և հակա-
ռակորդներու հարուածներուն . և կարեկ-
ցարար կը մտածէր անոնց մասին թէ՝
տգիտութեան պատճառաւ չեն հասկնար
ըրածնին :


Բայց համբերովթիւնն եւ յարատեւութիւնը իրենց պսակն առին:

Եւ արդարեւ համակրելի և ճշմարիտ գիտնական, Ուսչ. Ն. Մառ, փոշիներու մէջ թաղուած և մոռցուած փայլուն թուրամանեանը ճանչցաւ և զնահատեց ըստ արժանւոյն և ձեռք զբաւ վրան, սրբեց այրած աչքերուն արտասուցը. թուրամանեան ոգի՝ առաւ, կենդանացաւ և գօտէպինդ իր պեղումներն առաջ տարաւ: Այդ ժամանակ ես չկարողացայ այլեւս այցելել Անի: Աակայն լարուած ուշադրութեամբ միտ կը դնէի ինծի հասած լուրերուն ու մէկը միւսէն ուրախական էր: Երբ նա կազմած էր Զուարթնոց եկեղեցւոյ յատակազիծը և վերաշիներ էր հանգած եկեղեցին, անով որպէս թէ գոհ չմնալով Ուսչ. Մառ, իբր ստուգելու համար աներկրայ թորամանեանի ստեղծագործ կարողութիւնը, կը տանի հետը Արտահանի կողմերը անտառներու մէջ «Եօթն եկեղեցիներ» կոչուած մի վայր, ուր Զուարթնոցի նմանութեամբ շինուած կայ եղել կիսականգուն մի եկեղեցի: Ուսչ. Մառ համեմատելով անոր հետ թորամանեանի վերաշինածը, չնչին տարբերակներ զտած է, եւ անոր վրայ կրկնապատկած է իր համարումը Հայ ճարտարապետին զիտական ըմբռնողութեան վրայ եւ կրցածին չափ զիւրութիւններ տուած է պեղումներն առաջ տանելու, որով կարողացաւ առատ նիւթեր հաւաքել հայկական հին ճարտարապետութեան դրական հիմունքը վերակազմելու համար: Հին արուեստը որոշ

ուղղութեամբ մը տարուած է հելենասէր
Հայ Արշակունի թագաւորներու հովանա-
ւորութեամբ, հեռանալով օտարամուտ ազ-
գեցութիւններէ՝ բնորոշ նկարագիր մը կազ-
մուեր է մինչեւ Գ դարու վերջերը Յ. Գ. և
Քրիստոնէութեան մուտքը Հայաստանի մէջ
պաշտօնապէս, որ պիտի յեղափոխէր Հա-
յոց ճարտարապետութիւնը : Զէր կարելի
չհաւատալ որ Հայաստան ինցնուրոյն ճար-
տարապետութիւն ունիցած չըլլայ :

Թողրամանեանի պեղումներու ուսումնա-
սիրութեան արդիւնքները կու գային լոյս
սփռելու անցելոյն մթութեան մէջ, աւե-
րակներ լեզու կելլէին իրենց ինքնութիւնը
պատմելու։ Անոր համար լուսամիտ Ուսչ.
Մառ լաւագոյն գովեստը կու տայ Թողրա-
մանեանի կատարած գործին։ «Ես ամէնէն
առաջ լոյս կը սպասեմ ճարտարապետա-
կան յուշարձաններու լեզուէն, երբ մենք
կը սորվինք զայն հասկնալ . եւ ես կը
տեսնեմ այդ լեզուի առաջին ուսուցիչը
յանձին Թողրամանեանի» :

Եւ Ուսչ. Մատի արձակած գնահատաւ-
կան վճիռը լիովին կ'արդարանայ միայն
ի նկատի առնելով 1911ի հրատարակած
ընհական երկը, քանակութեամբ փոքր,
բայց բովանդակութեամբ մեծ «Պատմական
Հայ Ճարտարապետուրիւն» (Ուսումնասիւ-
րութիւն Տեկորի տաճարին շուրջ): Կա,
առ իւր մեկենասը, Ալեքսանդրապոլցի -
այժմ Լենինական - Տիար Յարութիւն
կարանեանի ուղերձին մէջ, զործը կը նը-
ւիրէ հանգուցեալ Տիկին Վարսենիկ կա-
րանեանի յիշատակին, որ ինչքան յաւեր-
ժական յիշատակ մըն է ազնուաբարոյ
Տիկնող՝ նոյնքան նաեւ յաւերժական ար-
ձան՝ իր բազմամեայ և խորամուխ հան-
ձարին արտադրութեան՝ առաջին անգամ,
և առաջին՝ իր տեսակին մէջ: Սա եղաւ
ճաշակ մը իր հետազայ հետազօտութեանց
շարքին, ուստի կը կրէ - Ա. Տեկորի
Տաճարը. - Թարամանեան Տեկորի (Տի-
գոռ?) տաճարէն սկսաւ, որովհետեւ Անիի
մեր խօսակցութեանց միջոց, իրեն մատ-
նացոյց ըրի Հ. Ալիշանի «Շիրակ»ը եւ
բազմահմուտ հօր ըրած անդրադարձու-



Զուարթնոց եկեղեցին
Վերակառուցում թ. Թորամանեամի

թիւնները. 48 թ. «Երրորդ շինատեղին մեծագոյն և հնագոյն քան զառաջինսն՝ է Տեկոր գիւղ, բնակեալ ի Հայոց և ի Թուրքաց¹ յայտնի նշանաւոր և զլխաւոր տեղի բնակութեան շինեալ ի հնութի, որում վկայէ և մեծաշէն և հաստակառոյց անկործան եկեղեցին, քան զյոգունս եկեղեցաց Հայոց, զուցէ թէեւ քան զբնաւ հնագոյն, վասն այնորիկ և արժանի բըն».

1. Զկային իմ ժամանակ, 1898 թ..
2. Երակ, էջ 131.

տատեցին Հ. Ալիշանի սրամտութիւնը, թէ առ այժմ հնագոյնն է շինուածներուն մէջ և յառաջ քան զբրիստոնէութիւնն հեթանոս տաճար մ'եղած է, բայց աւելի հին դամբարան մը, վասն զի ճանապարհէ դուրս խծոնքի ձորի բերանը շինուած է համանուն ջրի ափին. զիւղը յետոյ է շինուած, երբ վերածուեր է եկեղեցւոյ և աւելցուցեր են զմբէթն հինգերորդ դարուն: Եթէ տաճարին մէջ աւելի խոր պեղումներ ըլլան, հեթանոսական ծագումին և ինչ նըպատակով՝ զուցէ աւելի որոշ նշաններ ի յայտ գան¹:

Այսուհանդերձ կը շնորհաւորենք Թորամանեանը այդ զործին համար իբրեւ հիմադիր քրիստոնէական ճարտարապետութեան պեղումներու և ուսումնասիրութեան, և իր բացած արահետը, հայրենասէր ճարտարապետներու կրնայ ծառայել մեծամեծ զործեր կատարելու, մանաւանդ որ Խորհրդային Հայաստան պատրաստ է հովանաւորելու մեր հայրենիքի զիւտական աշխատութիւններն եւ ունի պատրաստ մասնագէտներ:

Այս մեծ յոյսը կը մեղմացնէ այն մեծ կորուսաը, զբեթէ անդարմանելի, զոր զգացինք յանձին անմոռանալի ճարտարապետ թ., Թորամանեանի:

Նա թողած է իր համեստութեան եւ ողմտութեան նկարագիրը՝ իրեն հետեւողներուն, և տկարներուն խրախուսիչ և յուսագրական խրատ մը. «Ես մի արահետ բացի, զոր պէտք է դարձնել պողոտայ»: Իսկ ես իր գամբարանին վրայ պիտի արձանագրէի իր բերնէն, Հռոմայեցի անմահ բանաստեղծին խօսքին նմանութեամբ. «Մինչեւ այն օրը որ յիշուի Անի, իմ ալ անուն հետը կ'ապրի»: զոր իբրեւ յարգանքի և երախտագիտութեան պսակ մը կը զնեմ բարեկամիս տապանաբարին վրայ, որու բահին բացած ալբահետին մէջ արդէն ոտք կոխած ենք, մինչեւ պողոտան հասնելու զուցէ ժամանակ պակսի:

Կ'ուզեմ յօդուածս կնքել բարեկամիս զրչով, որով կը վերջացնէ իր յառաջարանը. «Ես այսպէս կը սիրեմ Հայ պատ-

մական արուեստն ու գիտութիւնը. ով որ կը սիրէ ինձի պէս, թող բարեհամի զրիչը ձեռք առնել եւ իր ունեցածը տալ հայ արուեստի պատմութեան: Ո՞ն ուրեմն, ասպարէզը ձերն է, ով ազնիւ և պատուական քննադատներ»: Անոնք լռեցին: Խօսեցէք, օ՞ն, մասնագէտ ճարտարապետներ, եղէք նախանձախնդիր այն արուեստին զոր Հայաստան կը ցուցադրէ Բիւզանդիոնի և Հռոմի:

Թ. ԹՈՐԱՄԱՆԵԱՆ
ՈՐՊԵՍ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ
ԵՒ ՈՐՊԵՍ ԲԱՆԱՍՔՐ

Անձանօթը, հետամուտ էր անձանօթ մացած Անին ծանօթացնել աշխարհի. կ'ըսեն որ քար քարի զարնելով կայծ կ'արձակէ, այսպէս երբ նա սկսաւ աշխատակցիլ Ռւաչ. Մասի պեղումներուն, իրարու ետեւէ անոր ուսումնասիրութիւններն սկսան լուսաւոր կայծեր արձակել և մանաւանդ երբ Խաչիկ վ. Դատեանի հրաւէր գնաց և Զուարթնոցի պեղումները կատարեց և հրատարակեց իր ծանրակշիռ յօդուածը «Հայ ճարտարապետութիւնը – Զուարթնոց եկեղեցին», թ. 5, էջ 185 – 197), հակառակորդներն անգամ իմացան և յարգել կարծիքները:

Իսկապէս Թորամանեանի բեղնաւոր կեանքը ճարտարապետական արուեստին մէջ պատկառելի մատենագրական հաւաքում մը կը ներկայացնէ. զործեր, որ թէեւ բանակութեամբ փոքր են, բայց բովանդակութեամբ և որակով մեծ և արժէքաւոր:

Զուարթնոցի հրատարակութենէն վերջ 1905ին՝ հետզետէ լոյս տեսան մին միւս աւելի հետարբերական նիւթեր Անիի պեղումներու մասին, ինչպէս «Անիի պեղումների առթիւ» յօդուածաշաբարը «Յուշարար»ի մէջ (Աղեքսանդրապուլ, 1907, էջ 120 – 124, 140 – 143, 153 – 155):

1. Տիգուր կարելի՝ թարգմանել՝ Անժ-գերեզման, քանի որ գոռ՝ զենտերէն զերեզման կը նշանակէ, ինչպէս և բրտերէն այժմու զործածութեան մէջ ծանօթ է:

Յետոյ «Անւոյ միջնաբերդի պեղումները» Անդ, 1908, էջ 83–87): կ'արժէ տեսնել նաեւ իր «Բաց նամակ»ը (Առ Մեսրոպ վրդ.) թիֆլիսի «Մշակ»ի մէջ (1909, էջ 52–54, 57–60):

Ուշագրաւ է Ա. Էջմիածնի տաճարի հնագոյն ձեփ ուսումնասիրութիւնը «Օ դրենքի արարական գործադրութեան շրջաները» (էջ 1–24) և «Եռագոյն կարծիքներ հայ ճարտարապետութեան մասին» (197–220): Հուսկ իր վերջին հրատարակութիւններէն «Եախաքրիստոնէական հայ ճարտարապետութիւնը «Բանրեր»ի մէջ (Վաղարշապատ, 1921–1922, էջ 207–225), «Եախաքրիստ. հայ ճարտարապետութիւն» «Գուարթնոց»ի մէջ (Հր. Բալուեանի՝ ի Փարիզ, 1929, էջ 89–90, 124–126, 230–232, 319–325) և «Եինութիւններն ու նրանց գործածութեան կերպը հին Հայաստանում» (Երևան, 1932, էջ 40):

Մեծաւ մասսամբ յօդուածներ և փոքր հրատարակութիւններ, որոնց իւրաքանչիւրը սակայն զիտական սուր զիտողութիւններ ունի, եւ հետեւաբար հայ ճարտարապետութեամբ զրադարձներուն անհրաժեշտ է խորհրդակցութեան առնել զանոնք՝ զրել առաջ:

Հետաքրքրական է «Ճեկորի տաճար»ի

Հ. ԳԱՐԻԲԵԼ. ԿԱՇԱՊԵՏԵՆՅԱՆ

ՕՐՈՒԱՆ ԳՐԱԲԵՐ

Գ. ԳԵՂԱՐՔՈՒՆԻ «Լուրեր բազեկն» վեպ.
հրատ. Հ. Սամուել Գրասան. Փարիզ, 1933:

Յայտնի իր երեք հատորիկ «Ծագկաստան»ներով : Քաղաքն ըելած լուրերուն մէջ դարձեալ առանց շառագունելու կը հաղորդէ լուրեր զոր ոչ մէկ պարկեցած ականջ պիտի ուզէ լսել: Վենետիկէն Փարիզ անցնելով կը տեսնուի որ չէ մոոցած իր հետ տանելու Փիթթիկուլիի և Մարիոյ Մարիաննայի աղոստ միս բուրող հատորները:

Կնոջ մասին շատ անխիղմ կերպով կը յայտնուի, զայն կը համարի հասարակաց ճամբուն վլայ ձգուած կամուրջ, զայն կը նմանցնէ թթամանի... զայն կ'անուանէ յոյսերու գերեզման, տենչերու ազնիւ կոյուղի: Բայց այս աստիճան ինչո՞ւ ստորանցնել կինը, միթէ հեղինակն ինցն եւ ընթերցողները մայր մը չունին որ կին կը կոչուի: Այս, հեղինակներէն մեծ մասը աննպաստ զաղափարներ ունին կնոջ մասին, սակայն ազնուական կը մնան իրենց բացարութեանց մէջ: Պէտք է զիտնալ որ կինը եթէ վ. Հիւկոյի համար «Կարի յոյժ կատարելագործեալ սատանայ մըն է», սակայն ըստ մեծ Նաբուկոնի «Լինն Աստուծոյ բանաստեղծութիւնն է, մարդն աւ արձակ զրութիւնը»:

Գեղարքունի այն ատեն պիտի կարենայ յառաջաղիմել զրականորէն, երբ զրիչը լաւ մը սրբէ:

Գեղարքունի բերելով «Լուրեր բազեկն» կը զրաւէր ուշաղորութիւնը իրեն պէս մը տածողներուն. տարի մը վերջը 1934ին կը հրատարակէր ուրիշ հատոր մը «Թօշնեկնելու վերջ» խորագրով. բովանդակութեան համապատասխան չէ վէպին անունը. դարձեալ կինը իր մէկ քանի վիպակներով նախատուած է. վիպագրին համար կինն է «մուշ շինուած պուարիկ մը, հարճ մը, է աղախին մը, ոջիլ մը, ախտ մը, ժպիտ մը, ծաղիկ մը բուրան, պտուղ մը անուշ»:

ու թթու, կռուախնձոր մը շատ անգամ, մի մաղեր շատ բարակը...»:

Իր ամէն մէկ վէպին մէջ թատերաբեմը կը փոխուի, դերասաններու և թատերախաղի նիւթերը անփոփոխ կը մնան:

Ուղին զոր ընտրած կը թուփ՝ իրապաշտ դպրոցն է, որուն մէջ յաջողելու համար հարկ է որ զգուշանայ շփացնող անոյշ թոյներու ազդեցութենէն:

Ֆ. ՇԱՆՍՈՐ «Մարդ Աստուածը» վեպ.
թրգմ. Տ'Արգոս. տպ. «Արգոս», Գահիրէ:

Վիպասանը ֆրանսայի Գիտութեանց կաձառէն: Ատուրահատոր վէպ, այժմէական ընկերային, զիւանագիտական ոգեհարցական, իրացնէ զգայացունց զրութիւն, որ վէպն զուրս կ'ելլէ՝ ջղագար զիտական խնդիրներ կ'արձարձէ, կը համոզէ և կը բանդէ համոզումները, ապրողը կը մեղնէ, մեռեալին կեանց կու տայ. մեռնողները ելեքտրական հոսանքով յարութիւն կ'առնեն, կը պատմնն դատապարտեալներու ոճիրները, զիւանագիտական նենգութիւնները: Վէպին մէջ կը յիշուի: Այս, հեղինակներէն մեծ մասը աննպաստ զաղափարներ ունին կնոջ մասին, սակայն ազնուական կը մնան իրենց բացարութեանց մէջ: Պէտք է զիտնալ որ կինը եթէ վ. Հիւկոյի համար «Կարի յոյժ կատարելագործեալ սատանայ մըն է», սակայն ըստ մեծ Նաբուկոնի «Լինն Աստուծոյ բանաստեղծութիւնն է, մարդն աւ արձակ զրութիւնը»:

Կէօթէի «Ֆառութ».

թրգմ. Տ'Արգոս. տպ. «Արգոս», Գահիրէ:

Կէօթէի զլուի զրութոցն է, վիպասանը իմաստասէր ֆրատստի բերնով մարդկային ընկերութեան պատկերը կը ցուցադրէ: